ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Թուրքմենստանի Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

առաջնորդվելով հետագայում եւս Կողմ հանդիսացող պետությունների միջեւ առկա ավանդական բարեկամական հարաբերությունները զարգացնելու ցանկությամբ,

ցանկանալով իրենց պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների համար ստեղծել աշխատանքի բարենպաստ պայմաններ,

նկատի առնելով 1961 թ. ապրիլի 18-ի՝ դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի Կոնվենցիան,

պայմանավորվեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը հավասարության հիմունքով, երկարաժամկետ՝ 49 տարի ժամկետով, վարձակալության կտրամադրեն շենքերի եւ շինությունների կառուցման համար նախատեսված հողատարածքներ, որոնք բացառապես պետք է օգտագործվեն դեսպանությունների համար. Հայաստանի Հանրապետության դեպքում՝ Թուրքմենստանում, Թուրքմենստանի Հանրապետության դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում՝ ք. Երեւանում եւ ք. Աշգաբադում, նշված տարածքների օգտագործման համար ամրագրելով տարեկան 1 (մեկ) ԱՄՆ դոլար վարձավճար:

Սույն հոդվածի համաձայն՝ տրամադրվող հողատարածքների հասցեները կնշվեն միջկառավարական արձանագրության մեջ: Հողատարածքների ստույգ գտնվելու վայրը եւ սահմանները կնշվեն համապատասխան հատակագծերում: Սույն հոդվածում նշված արձանագրությունը եւ հատակագծերը կհանդիսանան սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասը:

ՀՈԴՎԱԾ 2

Նշված հողատարածքների օգտագործման պայմանները որոշվում են հողատարածքների վարձակալության պայմանագրերով, որոնք կկնքվեն սահմանված կարգով՝ համաձայն Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր Կողմ իրավաբանական ձեւակերպման գործում աջակցություն կցուցաբերի մյուս Կողմ պետությանը՝ փոխանցվող հողատարածքի վարձակալության առնչությամբ՝ համաձայն սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի, նստավայր պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված հողատարածքների վարձակալության պայմանագրերը կնքվում են 49 տարի ժամկետով եւ երկարաձգվում են նույն ժամանակահատվածով՝ հավելյալ համաձայնագրերի կնքման միջոցով: Հողատարածքների վարձակալության պայմանագրերի գործողության երկարաձգումը հնարավոր է՝ պայմանով, որ Համաձայնագիրն իր գործողությունը դադարեցրած չլինի:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը երաշխավորում են, որ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված հողատարածքները ծանրաբեռնված չեն սեփականության իրավունքից բխող ոչ մի պարտքով եւ պահանջով, գրավով եւ այլ սահմանափակումներով, ինչպես նաեւ նրանց նկատմամբ չեն ներկայացվել ոչ մի տեսակի պահանջներ եւ փոխհատուցման իրավունքներ: Հետագայում որեւէ պահանջ ի հայտ գալու դեպքում այն Կողմը, որի պետության տարածքում գտնվում են հողատարածքները, կկարգավորի այդպիսի պահանջները սեփական միջոցների հաշվին:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված հողատարածքները Կողմերը պարտավորվում են չփոխանցել երրորդ ֆիզիկական եւ/կամ իրավաբանական անձի՝ առանց մյուս կողմի՝ որոշակի կերպով արտահայտված գրավոր համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 6

Վարձակալված հողատարածքները օգտագործելիս, ինչպես նաեւ հողատարածքներում շենքերի եւ շինությունների նախագծման, շինարարական եւ շահագործման աշխատանքներ կատարելիս Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է հետեւել գտնվելու պետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

ՀՈԴՎԱԾ 7

Հողատարածքները եւ դրանց վրա կառուցված շենքերն ու շինությունները ազատվում են գտնվելու պետության տարածքում գանձվող բոլոր հարկերից, տուրքերից եւ այլ պարտադիր վճարումներից՝ բացառությամբ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով սահմանված վարձակալության վճարի:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրով փոխանցված հողատարածքի շահագործման պահպանման ծախսերը մարվում են այն Կողմի հաշվին, որի շահագործմանը այն հանձնվել է:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կարող են կատարվել Կողմերի գրավոր համաձայնությամբ. դրանք ձեւակերպվում են համապատասխան արձանագրություններով, որոնք կազմում են սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասը եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ կիրառության հետ կապված տարաձայնությունները Կողմերը կլուծեն բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է 49 տարի ժամկետով եւ ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ նույնպիսի ժամկետներով, եթե Կողմերից մեկը գրավոր չի ծանուցում մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին ոչ ուշ, քան համապատասխան ժամկետը լրանալուց 1 (մեկ) տարի առաջ:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում Կողմերը խորհրդակցություններով եւ բանակցություններով որոշում են սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով նշված հողատարածքներում կառուցված շենքերի հետագա օգտագործումը:

Կատարված է ք.Երեւանում 2012 թվականի նոյեմբերի 29 -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն եւ ռուսերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ որպես հիմք ընդունվում է ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014թ. մարտի 4-ին